

ՀԱՐԱՋԴԱՅԻՆ ԶՈՅԴ ՅՈՒԵԼԵԱՆՆԵՐԻ ՏՕՆՀ
ԷՐԶՐՈՒՄՈՒՄ

Թիւրքահայը երբէք չը կարողացաւ խորապէս զգալ հայ զրերի զիւտի և տպագրութեան տօների նշանակութիւնը։ Կովկասը պատրաստվեց տօնել միահամուռ, համադրային ջանքերով. ամբողջ մի տարի մտքերը այդ ուղղութեամբ էին մտածում։ Կովկասը ցանկացաւ տօնել հայ մտքի ստեղծագործութեան տօները ինքնարերաբար, սրտաբուղիս տրամադրութեամբ։

Չեզ մօտ, Կովկասում, յաւերժացրին զոյգ յօրելիսանները դրական, հնչիւն գոհաբերութիւնով՝ դպրոցական ֆօնդով, միլիոնին մօտեցող ըուրլիններով։

Պատի՛ւ Կովկասին։

Բայց տեսէք պատկերը Թիւրքահայաստանում, տեսէք հայ ժողովրդի լքված, դասալիք տրամադրութիւնները կ. Պօլսում և ամբողջ Թիւրքիայում....

Թիւրքիայի զանազան կենտրօններում ևս «տօնվեց» հոկտ. 13-ը, բայց տօնվեց վերջին ժամին պատրիարքարանից ստացված պաշտօնական հրամանի և կարգադրութեան ոյժով։

Վերից հրամայել էին տօնել, ու ստորագաս պաշտօնեանները «տօնեցին», զանցառութիւն արած չը լինելու համար միայն։

Մինչև հոկտեմբեր, ամսմի պկվզը ոչ ոք մտքից չէր անց կացնում մեծ տօնը, ոչ մի պատշաճութիւն չէր տեսնված։ Սա շատ պարզ աստիճանաչափ է, ոյց տուող՝ ազգերի, համայնքների կուլտուրայի հանդէպ իրանց ունեցած վերաբերմունքը, նրա նշանակութիւնը գնահատելու ընդունակութիւնը։

Զօյց յօքելեանները տօնելու ժամանակառ նութիւնը էրզրումում ստանձնեց հայերի հոգեսր իշխանութիւնը։

Հոկտ. 12-ին Մմբատ եպիսկոպոսը պատարագ մատուցեց, ապա հոգեհանգիստ կատարեց ո. Մեսրոպի, ո. Սահակի, Վուաշապուհի և Թարգմանիչների յիշատակին։ Դիւզերից հրաւերվել էին քահանաներ, իսկ ժողովրդին խնդրվել էր քակ պահել խառնութիւնը։

Նոյն օրը փակ էին հայերի, բողոքականների, կաթոլիկների, ֆրանսիացիների բուլը ուսումնարանները։

Հոգեհանգստից վերջ, ըստ յայտարարութեան, «աւուր պատշաճ բանախօսութիւններ» եղան ուսումնարանի բակում։

Հանդէսը բացվեց Մմբատ եպիսկոպոսի ազօթքով ու շատ սովորական ֆրազներով համեմալա մի քարոզով։ Ապա զպրոցների տեսուչ Խոստումը կցկառուր մի քահանախօսութիւն» արեց, նրան յաջօրդեց հայ բողոքական համայնքի ներկայացուցչի ատենագործական համայնքի ներկայացուցչի ատենագործ մի քանի բառով փակեց հանդէսը Ուսումնախօսութիւնը, յետոյ դարձեալ Մմբատ եպիսկոպոսը մի քանի բառով փակեց հանդէսը Բոլորի էլ խօսուածները յիշատակութեան ոչ մի արժանիք չեն ներկայացնում, ասացին՝ «յաւերժացնենք այս տօնը, յիշնք մեր փառաւոր նախնիքները, օրհնենք նրանց յիշատակը»... և այլն։

Աշակերտունիները երգեցին մի քանի հոգեսր և հին ազգային երգեր, «Հայր մեր» ազօթքով փակվեց հանդէսը ներկայաց էին Վիէնական Միսիթարեան

հայրերը, հայ բողոքական և հայ կաթոլիկ համայնքների ներկայացուցիչները, հայ դպրոցների աշակերտութիւնը մասսամբ, և գրեթէ 2500-ից աւելի բազմութիւն երկու սեուցից։

«Հանդէսը» կրում էր կէս և կրօնական մնասօրութիւնը Զը կար այն խանդավառ ովկորութիւնը, որ յատուկ է աշխարհիկ ոգուն, չը կար կուլտուրական յազմանաշկ ինքնավախտան, ուրախ գիտակցութիւնը։

Անա այսպիսի խեղճ ու կրակ փառքով տօնեց թիւրբահայաստանի մայրաքաղաք էրզրումը՝ հայ քաղաքակրթութեան զոյզ յօքելեանները։

Ամբողջ տարվայ ընթացքում, եթէ չեմ սխալվում, հազիւ 3—4 տեղ են տօնվել զոյզ տօները սազ թիւրքիայում, և զրանք է օպավելով որևէ նշանաւոր ուժապահութեան պատեհութիւնից, ինչպիսին եղաւ Մուշի ս. Կարապետի վանքում և այլն։

Կովկասահայի կառուցած միլիօնանոց զպրոցական ֆօնդի գրմաց՝ թիւրքահայութիւնը մինչև այսօր ոչինչ չեն արել։ Կարծում եմ՝ մինչև հոկտ. 4-ը ոգուրցական քրական ֆօնդից համար Կ. Պոլսի լրագիրներից մէկը միայն ստացել է ընդամենը 2 ոսկի (17 բուլլի)։ Եւ այդքան։

Հազիւ թէ սրանից յետոյ որևէ շօշափելի բան զոյնայու Արդէն շատ չի անցնի և կը վիճակիվ ձեզ կարգալ թիւրքիայի մտաւորական կենտրօն Կ. Պոլսի մետասաներորդ ժաման հապճեպով կազմակերպած հանդէսների ու շարլատանութիւնների նկարագրութիւնը։

Մշ որ թօղ չը փորձէ արդարացնել թիւրքահայերի այս քար անտարբերութիւնը տիրող քաղաքական պայմաններով։ Ամբողջ ցաւը կայանում է նրանում, որ ցածր է թիւրքահայերի կուլտուրական, ինքնազիւտակցութեան ընդհանուր մակարդակը։ Անա միակ պատճառը՝

Քուրէ